

Հովանոց Տրդատայ. — Terrace ou Trône de Teridate.

զամս չորեքհազար յորժամ հայկազնեանն Գեղամ նահապետ շինեաց անդ 'ի ձորակի միում զԳ-ղամ դաստակերտ, զոր թոռն նորա Գառնիկ՝ յիւր անուն Գառնի անուանակոչեաց. և եղև այն գիւղաքաղաք բարգաւաճ մինչև յաւուրս Տրդատայ մեծի. որ յառաջնում քառորդի Դ դարու շինեաց անդ ամրոց "որձաքար և կոփածոյ վիմք, երկաթագամ և կապարով մածուցեալ, որպէս ասէ Խորոնեցին. յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանաք, սքանչելի գրչուածովք բարձր քանդակաւ. 'ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտայ. և գրեալ 'ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով". զսա յետինքն կոչեցին ՍԱՐԱՒՈՑԹ ՏՐԴԱՏՍՑ, և ցարդ կոչի Թաղտ Տրդատայ: Շէն էր տակաւին և առ Շահաբատաւ, և բնակիչք նորա հարին զասպատակս նորա, այլ ապա գերի վարեցան: Ի մեծի սասանուլթեան Երևանայ յամին 1679, 'ի սպառ կործանեցաւ և անբնակ եղև Գառնի, և "անկաւ զարմանալի Թաղտն Տրդատայ", որպէս ասէն ժամանակագիրքք: Երևին ցարդ 'ի պաղատեան գահաւանդի ուրեմն, որ խոնարհի 'ի հովիտն յարևմտից վտակին Գառնւոյ աւերակք գղեկին քառակուսւոյ, իբր հարիւր կանգուն յերկայնութիւն 'ի հարաւոյ ընդ հիւսիս և հարիւր և քսան յելից ընդ մուտս. Ճակատն զառ 'ի վայր 'ի ջուրն հայի, իսկ երկոքին կողմանքն ամուրք 'ի բնէ՝ ամրագոյն ևս գործեալ են փորալից պարսպօք որ 'ի կոփածոյ դորշագոյն լաւայէ. Ճարտարագործ յոյժ. իսկ յետուստ կողմն՝ ամրացեալ է յարուեստէ: Երևին տեղիք աշտարակացն որք ամբառնային պաղատեան սեամբք՝ 'ի վերայ կոհակաց ժայռից, որոց բեկորք ցրուեալ են յերեսս ձորահովտին խառն ընդ բնական փրթուածոց քարանց. հնգանկիւնի տեսանի ձև սեանցն, և որակ քարին խիտ և սեագոյն. և բնութեան ինքնին իբրև 'ի նախանձ մտեալ ընդ արուեստի՝ ձևակերպեալ է անդ սիւնս իմն անհեղեղս և պատուարս անձեռագործս՝ կարգ ըստ կարգէ: Հիւսիսային կողմն նրն կիսաքոլոր ընծայէ պատուար աշտարակաղարդ, և յանդին եղջերքն յարևելս և յարևմուտս. մի միայն մուտք նշմարին առ արևելեան աշտարակաւ, խաչաձև նշանաք դրուագեալ: Իսկ զմէջ պարսպայն դերբուակք ևեթ ունին խառն 'ի խուռն մասանց շինուածոց, սեանց խարսխաց և քուռց. ընդ որս և Հովանոցն այն զարմանալի, և արժանի ձեռակերտ քաջին Թագաւորի և առաքինի սիրոյն արձան. որ թէպէտ և սա-